ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Սպիտակ (Հայաստանի Հանրապետություն) և Օրշա (Բելառուսի Հանրապետություն) քաղաքների եղբայրացման

17 հուլիսի 2012թ. ք. Օրշա

Մեծ նշանակություն տալով միջազգային, տնտեսական և մշակութային կապերի զարգացմանը և ազգերի միջև վստահության, փոխհամաձայնության ու բարեկամության ամրապնդմանը՝ Սպիտակ քաղաքը, ի դեմս քաղաքապետ Գագիկ Հենրիկի Սահակյանի և Օրշա քաղաքը, ի դեմս Օրշայի քաղաքային գործադիր կոմիտեի նախագահ Նիկոլայ Վիկտորի Լիսովսկու, կնքեցին Սպիտակ (Հայաստանի Հանրապետություն) և Օրշա (Բելառուսի Հանրապետություն) քաղաքների եղբայրացման սույն համաձայնագիրը:

Կողմերն իրենց իրավասության սահմաններում հավասարության ու համագործակցության հիման վրա Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության օրենսդրության համապատասխան պետք է նպաստեն.

երկկողմանի տնտեսական, գիտատեխնիկական, մշակութային և հումանիտար համագործակցության կայացմանն ու ընդարձակմանը,

բոլոր տիպի սեփականության տնտեսվարող սուբյեկտների միջև անմիջական կապերի կնքման համար պայմանների ստեղծմանը,

գիտության, կրթության, մշակույթի, սպորտի, տեղեկատվության ոլորտներում համագործակցությանը,

ներդրումային և նորարարական գործունեության զարգացմանը,

ուսումնական հաստատությունների, մշակութային և սպորտային հիմնարկությունների, թատրոնների և թանգարանների, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների միջև անմիջական կապերի ստեղծմանն ու զարգացմանը,

տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, ինչպես նաև գործունեության տարբեր ոլորտների մասնագետների միջև փորձի փոխանակմանը,

կողմերի միջև համաձայնեցված համագործակցության այլ ձևերին:

Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքելու պահից և գործում է անժամկետ:

Համաձայնագիրը կազմված է հայերեն և ռուսերեն՝ չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին երկու օրինակ:

Սպիտակ քաղաքի կողմից
(Հայաստանի Հանրապետություն)

Սպիտակի քաղաքապետ՝

Գ.Հ. Սահակյան

Օրշայի քաղաքային գործադիր կոմիտեի
կողմից (Բելառուսի Հանրապետություն)

Օրշայի քաղաքային գործադիր
կոմիտեի նախագահ՝

Ն.Վ. Լիսովսկի